

Սեռական հարցերուն մեջ, ընդհանրապես պետք է զանազանել *սեռ* (Sex) եւ *գենդեր* (Gender) հասկացութիւնները: Նոյնպէս զանազանելու է՝ *սեռական ինքնութիւնը* (Sexual Identity) եւ *սեռական կողմնորոշումը* (Sexual Orientation).-

- **«Սեռ»** հասկացութիւնը առնչուած է մարդոց կենսաբանական (Biology) եւ քնախօսական (Physiology) յատկանիշներուն, որոնք առաջին հերթին կը բնորոշեն ու կը զանազանեն արականն ու իգականը:
- **«Գենդեր»**, որ բաղդատաբար աւելի նոր հասկացութիւն մըն է, առնչուած է մարդոց մարմնական երեւելի յատկանիշներէն անդին, ենթակայական (Subjective) սեռական ինքնութեան (տե՛ս վարը), որով մարդ ինքզինք կը բնորոշէ.- արական, իգական կամ այլ:
- **«Սեռական ինքնութիւն»** հասկացութիւնը կը վերաբերի նոյնիսքն անձին, թէ ինդոյն առարկայ անձը, սեռական առումով, իր ինքնութիւնը ինչպէ՞ս կը բացայայտէ, կամ ինքզինք ինչպէ՞ս կը բնորոշէ.- արական, իգական կամ այլ:
- Իսկ **«սեռական կողմնորոշում»** հասկացութիւնը առնչուած է անձի մը ուրիշներու հանդէպ ունեցած յարատեւ սեռական հետաքրքրութեան ու հակումին:

Համասեռականութիւն (Homosexuality) եւ այլասեռականութիւն (Heterosexuality) հասկացութիւններէն ետք, այստեղ, առանց մանրամասնելու պիտի թուենք կարգ մը *«սեռական շեղումներ»* կամ *«սեռական տարբերակներ»* (ըստ հայեցողութեան, ինչպէս նաեւ ըստ երկրի ու ընկերա-հասարակական շրջանակի).-

- **Երկսեռականութիւն (Bisexuality).**-

Այս պարագային, մարդիկ կը կոչուին երկսեռականներ եւ բնածին հակումով անոնք, երկու սեռերուն հետ սիրային ու սեռային յարաբերութիւն կը մշակեն: Հնադարեան յունա-հռոմէական հասարակութեան մէջ «բնական» երեւոյթ կը նկատուէր, մանաւանդ այրերուն համար: Նաեւ աւստրիացի բժիշկ-հոգեվերլուծաբան **Ս. Ֆրոյդի** (Sigmund Freud, 1856 – 1939 թ.) վիճելի կարծիքով, մարդոց բնածին հակումը՝ երկսեռականութիւնն է:

- **Անդրսեռականութիւն (Transsexuality).**-

Այս պարագային, արտաքնապէս որոշ սեռի (արական կամ իգական) պատկանող անձը, զգացական առումով չընդունիր իր այդ սեռին պատկանիլը եւ ինքնիրեն համար միւս սեռին պատկանելութիւնը կ'ընդունի: Օրինակ արտաքին երեւոյթով այր մը, ինքզինք որպէս կին կը զգայ («այր-կիները») կամ արտաքին երեւոյթով կին մը, ինքզինք որպէս այր կը զգայ («կին-այրերը»): Նմանօրինակ յատկանիշերով մարդիկ, նաեւ պատրաստ են բժշկական վիրահատութիւններու եւ տարբեր դեղերու միջոցով որոշ մարմնական փոփոխութիւններու կամ սեռային յարմարումի մը հասնիլ: